



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

STATE REVENUE COMMITTEE OF THE GOVERNMENT OF THE
REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

0015, ք. Երևան, Մ. Խորենացու 3,7, Հեռ.՝ 59 44 01, 59 46 01

3,7 M. Khorenatsi Str., 0015, Yerevan Tel.: 59 44 01, 59 46 01

№ 2/125-Ա

«06» Մայիսի 2016թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

Վ.ՍԻՍԱԿՅԱՆԻՆ, Ա.ԵԹԻՄՅԱՆԻՆ, Վ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, Դ.ՂԱԼՈՒՄՅԱՆԻՆ,
Ա.ԱՅՎԱԶՅԱՆԻՆ, Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՎ Ե.ԱՐԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Հարկային ծառայության մասին,, ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 6-ի թիվ 15/2016 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի էրեբունու հարկային տեսչության պետ Վախթանգ Սիսակյանին, Արմավիրի տարածքային հարկային տեսչության պետ Արթուր Եթիմյանին, Գավառի տարածքային հարկային տեսչության պետ Վարդան Ավետիսյանին, Գյումրու տարածքային հարկային տեսչության պետ Դավիթ Ղալումյանին, Կապանի տարածքային հարկային տեսչության պետ Արթուր Այվազյանին, Հրազդանի տարածքային հարկային տեսչության պետ Մարտիկ Վարդանյանին և Սևանի տարածքային հարկային տեսչության պետ Եղիշե Աբելյանին հայտարարել „ԳՐԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ,,:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության անձնակազմի հաշվառման բաժնի պետ Ա.Վարդանյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:
- 3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՀՈՎԱՍԵՓՅԱՆ